

Հ.Մ.Ը.Մ. օրկանական իմաստով ու արտաքին բնոյթով մարմնամարզական կառոյց է, սակայն ազգային գաղափարախօսական իր նստուածքով՝ շատ անելին է: Ան համակ գաղափարախօսութիւն է ու համակ ծառայութիւն՝ բառին վաւերական իմաստով:

Ա.Ր.Ա.Մ Ա.

Հ.Մ.Ը.Մ. հայ ժողովուրդի ղախանջատիրական կամբքը արտայայտող կազմակերպութիւն է:

Վ.Տ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ

Հ.Մ.Ը.Մ. նորահաս սերունդները ներգրատող, հայ երիտասարդները առինքնող ու ոգեպինող գաղափարաբանութիւն է:

ՏՈՔԹ. ՄԻՍԱԶ ԱՐՁՈՒՄԱՆԵԱՆ

Հ.Մ.Ը.Մ. հասարքի եւ գոհողութեան միութիւն է, ինքնազրկումի եւ յոգնատանջ ճիգերու աստղաբէպի սիրահարներու միութիւն է:

ԵՐՈՒԱՆԴ ՏԷՄԻՐՃԵԱՆ

Հ.Մ.Ը.Մ. ազգային արժէք է, այնդէս ինչդէս Եռագոյնը, Զինանշանը եւ Հայաստանի օրհներգը:

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

Հ.Մ.Ը.Մ.Ի
ԳԱՂԱՓԱՐԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ

Խմբագրեց՝
ԿԱՐՕ ԹԻԻԹԻՒՆՃԵԱՆ

1999
ՊԵՂՈՒՔ

Սոյն Գրքոյկը հրատարակուեցաւ
մեկենասութեամբ
ՆԱԶԱՐԷԹ, ՊԵՏԻԿ, ՌԱՖՖԻ
ՍԱՊՈՒՆՃԵԱՆ Եղբայրներու,
ի յիշատակ իրենց հօր՝
ՃՈՐՃԻ ՍԱՆՊՈՒՆՃԵԱՆԻ
որ մաս կազմած է Հալէպի
Հ.Մ.Ը.Մ.ի կազմութիւնը նախադատրաստող
Փութոյի խումբերուն:

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

«Հ.Մ.Ը.Մ.ի Գաղափարաբանութիւն»ը գրքոյկին հրատարակումով արդի պարտք մըն է, զոր կը մատուցանեն իմ շար սիրելի միութեանս՝ Հ.Մ.Ը.Մ.ին:

«Հ.Մ.Ը.Մ.ի Գաղափարաբանութիւն»ը սրեղծագործական բնոյթի գործ մը չէ, այլ համադրական աշխատանք մըն է լուսարշակի փակ առնելու բոլոր այն արի, ազնիւ ու վսեմ առաքիւնութիւնները, որոնցմով յայկանշուեցաւ հայ ժողովուրդի հարազատ զաւակ այս մեծ կազմակերպութիւնը՝ իր հիմնադրութենէն մինչև մեր օրերը:

Պատմական ամփոփ ծանօթութիւններով եւ վաւերագրական քանի մը յուշապատումներով լեցուն այս գրքոյկը, կ'արտացոլացնէ Հայ Մարմնակիրքական Ընդհանուր Միութեան դիցազներգութիւնը՝ իր ապրումներով ու իրէայններով, իր ուխտով ու պայքարով, իր այն բոլոր նուաճումներով, որոնցմով ան կը մնայ ասպետական ոգիի ցուցանիշ միութիւն:

Երախտիքդ անսպառ, երախտաշատ Հ.Մ.Ը.Մ., պիտի չմոռնանք քեզ:

ԿԱՐՕ ԹԻԻԹԻԻՆՃԵԱՆ

ԱՅՍ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ

Այս գրքոյկը Հ.Մ.Ը.Մ.ական գրականութիւնը հարըստացնող մոր հրատարակութիւն մըն է: Խորհրդածական եւ վկայակոչական բնոյթի անոր բովանդակութիւնը սեղմ էջերու մէջ գեղեցիկ բնութագրումը կը կատարէ Հ.Մ.Ը.Մ.ի ազգային-գաղափարական արժէքներուն, միութենական առօրեային մէջ անոնց անմիջական կիրարկումը ներկայացնող օրինակներով:

Գրքոյկը համադրական աշխատանքի գնահատելի ճիգ մըն է դէպքերէն եւ դէմքերէն անդին որոնելու, գտնելու եւ տարազելու Հ.Մ.Ը.Մ.ի գաղափարական այն հզօր ուժը, որուն շնորհիւ անթիւ տղաք ու աղջիկներ անկրկնելի այս Միութեան յարկին տակ, տասնամեակներ շարունակ, մտքի եւ հոգիի կարգապահութիւն սորվեցան, բարոյական անխաթար նկարագիր կերտեցին եւ, ամէնէն կարելորդ, շեշտօրէ՛ն մնացին հայ ու գիտակցօրէն ապրեցան հայութեան իրենց պարծանքը:

Գրքոյկը իր մատչելի լեզուով եւ սրտառուչ օրինակներով Հ.Մ.Ը.Մ.ի ծանօթացման դաստիարակիչ ուղեցոյց մը կրնայ հանդիսանալ մատղաշ սերունդի ներկայացուցիչներուն համար, միաժամանակ նաեւ՝ հին յուշեր եւ ապրումներ բորբոքեցնող քաղցր վկայարան մը՝ անցեալի սերունդներուն համար:

Հ.Մ.Ը.Մ.Ի ԳԱՂԱՓԱՐԱԲԱՆՆՈՒԹԻՒՆԸ

Քաղաքական, մշակութային, բարեսիրական, կրթական, մարզական միութիւններ ծնունդ կ'առնեն որոշ նպատակի մը իրագործման համար, նախապէս պատրաստելով իրենց Ծրագիր-Կանոնագիրը: Այդպէս չեղաւ սակայն Հ.Մ.Ը.Մ.ի պարագային: Հ.Մ.Ը.Մ. ծնունդ առաւ հիմնովին տարբեր պայմաններու տակ:

Հ.Մ.Ը.Մ. չկար տակաւին, երբ Հ.Մ.Ը.Մ.ականներ կային: Ծրագիր ու կանոնագիր չունէինք տակաւին, մինչ միութիւն կար արդէն եւ կը գործէր Պոլսոյ հայաշատ թաղամասերուն մէջ: Եւ ճիշդ պէտք է համարել, որ Հ.Մ.Ը.Մ. փաստօրէն գոյութիւն ունէր իր պաշտօնական գոյութենէն առաջ, այսինքն՝ 1918էն առաջ, ոչ միայն իբր հոգեբանութիւն, այլ՝ իբր անջատ-անջատ մարզական խումբեր, որոնց թիւը (1911-1915) կը հասնէր 65ի, անկախաբար սկաուտական միաւորներէն:

Հայ մարմնակրթանքի ռահվիրայ՝ Ծաւարշ Քրիստեան Հայկական բոլոր ակումբները մէկ դրօշի տակ համախմբելու եւ հզօր մարզական միութիւն մը ստեղծե-

լու նպատակով կոչ ուղղած էր «Մարմնամարզ» շաբաթաթերթին մէջ, կազմելու համար կեդրոնական Հայ Մարզական Ակումբ:

Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւն մը ստեղծելու Քրիսեանի պատգամը տեղ գտած էր արդէն բոլորին մօտ եւ պաշտօնական յայտարարագիրով մը պիտի հրապարակուէր:

Վրայ կը հասնի Համաշխարհային Առաջին Պատերազմը եւ ապա՝ բոլորիս ծանօթ Հայոց Մեծ Եղեռնը, որուն զոհ կ'երթան մէկ ու կէս միլիոն հայեր: Հայ մտաւորականութեան հետ կը ձերբակալուի եւ կը նահատակուի նաեւ Ծաւարշ Քրիսեան:

Երեք տարի ետք, Քրիսեանի գաղափարակից ընկերները, գլխաւորութեամբ՝ Հ.Մ.Ը.Մ.ի գաղափարախօս Գրիգոր Յակոբեանի, մտածումը կ'ունենան վերըստեղծելու Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւնը, կորուստէ եւ վերջնական ձուլումէ փրկելու համար հայոց մնացորդացը:

Հ.Մ.Ը.Մ.ը բազմամիւղ եւ շքեղօրէն սաղարթախիտ ծառ մը դարձած է ազգային մեծ «անտառ»ին մէջ: Թաղերու մէջ հիմնուած որբանոցները ժամանակն էր որ բանային իրենց դռները՝ հոն հաւաքուած մեր որբերուն հասնելու համար: Այդ էր արդէն Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան մղում տուող առաջին գաղափարը:

ՏԻԳՐԱՆ ՔՀՆՅ. ԽՈՅԵԱՆ

Վերադառնալով այս հարցին կը նկատենք, որ Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադիր ժողովը (16 Նոյ. 1918) տեսած է միայն կէս ժամ: Անուանակոչումէն (Հ.Մ.Ը.Մ.) ետք, օրակարգի երկրորդ հարցը եղած է հայ որբուկներու եւ գաղթականներու հոգատարութիւնը: Օրակարգի երրորդ կէտը՝ Կեդրոնական Վարչութեան ընտրութիւն եւ դիւանի կազմութիւն յետաձգուած է յաջորդ ժողովին, ժամավաճառ չըլլալու եւ վայրկեան առաջ հասնելու թշուառ ու անտէր հայ պատանիներուն:

Հո՛ւ է Հ.Մ.Ը.Մ.ի առաքելութեան ու գոյութեան իմաստը: Հոս, այս երեւոյթին մէջ կը կայանայ Հ.Մ.Ը.Մ.ի գաղափարախօսութիւնը, հաւատոյ հանգանակը, որուն հաւատարիմ մնաց Հ.Մ.Ը.Մ. իր հիմնադրութենէն մինչեւ այսօր:

*1918ին մանուկ մը ծնաւ հայոց ցաւէն,
տառապանքէն: Զարդին արիւնով մկրտեցին
այս մանուկը եւ գայն կոչեցին Հ.Մ.Ը.Մ.: Իսկ
այս մանուկին պարտականութիւն տուին՝
ծառայել հայ ժողովուրդին:*

ՍԱՄՈՒԷԼ ՄԿՐՏԻԶԵԱՆ

Արդարեւ այս այն միութիւնն է, որ ջարդին յաջորդող տարիներուն Սկիւտարի մէջ կը հիմնէ առաջին ԶՐԻ ԴԵՂԱՐԱՆԸ ԵՒ ԾԱՐԺՈՒՆ ՀԻԻԱՆԴԱՆՈՅԸ եւ երկու ամսուան մէջ կը խնամէ 1500ի չափ գաղթական: Միաժամանակ ԶՈՐՑԱԾ ԾԱՌԵՐ կը հաւաքէ եւ իբրեւ ձմրան վառելիք կը տրամադրէ տարագիրներուն:

Այս այն միութիւնն է, որ *քոքարթ* կը տպէ «ՅԻՇԵՆՔ

ՄԵՐ ՈՐԲԵՐԸ» բնաբանով եւ հանգանակուած գումարով տարազներ կ'ապահովէ բոլոր որբերուն: Մանկավարժ խմբապետներ կը տրամադրէ որբանոցներուն:

Այս այն միութիւնն է, որ Եալովայէն (Մարմարա ծովուն վրայ) 4000 հայեր ստոյգ մահէ կը փրկէ եւ նաւը վարձելով զանոնք կը փոխադրէ Յունաստան: Նաւուն վարձքը ամբողջութեամբ կը վճարէ օրուան Կեդրոնական Վարչութիւնը:

Այս այն միութիւնն է, որ մտածումը կ'ունենայ ՈՐԲԵՐԷՆ ԳԻԻՂԱՏՆՏԵՍՆԵՐ ՊԱՏՐԱՍՏԵԼ ՈՒ ՀԱՅՐԵՆԻՔ ՂՐԿԵԼ: Այդ գործին համար ԱՐՄԱՅԻ դպրեվանքին մէջ կը հաւաքէ երկու հարիւր որբեր եւ երկու տարուան դասընթացքէ ետք, 20 Օգոստոս 1920ին, ԵՐԿԻՐ կ'ուղարկէ 126 հողագործ սկաուտներ:

Այս այն միութիւնն է, որ «ՎՃԱՐԵՑԷՔ ԶԵՐ ՊԱՐՏՔԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿԻՆ» խորագրով (իր պաշտօնաթերթ «Հայ Սկաուտ»ի 16 Փետրուար 1920 համարին մէջ) կոչ կ'ուղղէ հանրութեան եւ հանգանակուած գումարը կ'ուղարկէ Հայաստան:

Այս այն միութիւնն է, որ ընդառաջելով Հայաստանի կրթական նախարար՝ Նիկոլ Աղբալեանի կոչին, սկաուտ մարզիկներ կ'ուղարկէ Հայաստան՝ սկաուտութիւնն ու մարմնակրթանքը տարածելու համար նաեւ Մայր Հայրենիքի մէջ: Նոյն մօտեցումով տուներէն դրամ եւ հագուստ կը հաւաքէ (1-25 Նոյեմբեր 1920) եւ կ'ուղարկէ Հայաստան, յիշեալ 24 օրերը հոչակելով «ՍԿԱՌԻՏԸ ՀԱՅՐԵՆԻՔԻՆ ՀԱՄԱՐ»:

Այս այն միութիւնն է, որ պատերազմի եւ սովի ժամանակ կը ստանձնէ պարենաւորման դժուարին գործը, երբ պետական սպասարկութիւնները զբաղած էին ապահովական հարցերով:

Հ.Մ.Ը.Մ. փառաբանական դաստիարակության ամենէն վառ օճախներէն մէկն է:

ԳԱՐԵԳԻՆ Ա.

Այս այն միութիւնն է, որ հայրաբար կը մտնէ Հայաստանի որբանոցներէն ներս եւ ախտավարակ մոլութիւններէ կը փրկէ անչափահաս որբուհիները:

Այս այն միութիւնն է, որ թուրք եւ հայ բախումներու օրերուն, մէկէ աւելի ճակատներու վրայ կ'օգնէ հայկական բանակին, իբրեւ սուրհանդակ, մթերանոցի պահակ, մատակարար, դրօշախօս եւ Կարմիր Խաչ: Իր անգուգական գործիչներէն՝ Վահան Չերազի նամակներէն մէկուն մէջ կը կարդանք հետեւեալը.

«Այժմ դադրած ենք սկառուտ եւ մարզիկ ըլլալէ, բոլորս կամաւոր զինուորներ ենք ու մեր հայրենիքի պաշտպանութեան համար խրամներ կը փորենք»: Չերազ չի գոհանար իրեն տրուած պարտականութիւններով: Մէկդի կը նետէ սկառուտական գաւազանը եւ կը միանայ ԱՆԴՐԱՆԻԿի գունդին:

Իսկապէս Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւնը մեր ամենուս միութիւնն է: Ան ստեղծուեցաւ անմիջապէս 1918էն յետոյ, մեծ ոգեւորութեան շրջանին, երբ հայ ժողովուրդը նոր կեանք մը կը սկսէր ամէն տեղ, բայց մանաւանդ ազատ Հայաստանի մէջ:

Զմոռնանք, որ Պոլսոյ մէջ խումբ մը ողջամիտ մարդիկ Հ.Մ.Ը.Մ.ին ծնունդ տուին ոչ թէ գաղութներուն համար, այլ մեր Մայր երկրին՝ Հայաստանի համար:

ՎԱԶԳԷՆ Ա.

Նոյնը ըրաւ Հայաստանի Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադիրներէն, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ Եղբ. Վարդան Բախշեան 1991ին, Արցախեան պայքարին իր գերագոյն զոհաբերութեամբ:

Նահատակութեան նախօրեակին, Վարդան մտահոգ էր Կեդրոնական Վարչութեան անդամ ընտրուելուն համար, որովհետեւ կը գիտակցէր, որ իրեն վստահուած պարտականութիւնը ամբողջութեամբ կատարելու համար ժամանակ պիտի չունենար զբաղելու Արցախով: Իր նամակներէն մէկուն մէջ ան կը գրէր.

«Ես մթնոլորտը բազմիցս փորձել եմ ներկայացնել: Դարձեալ պիտի հայիոյեմ... որովհետեւ այսօրուայ պարսպ ու անհանգիստ վիճակովս չարհուրանքի մէջ եմ: Կարո՞ղ ես երեւակայել, երբ Գետաշէն կռիւ կայ, ուլուն եմ գնալ... բայց դրանից չրկուած եմ եւ կարծես հաշմանդամ լինեմ: Մարդ պէտք է չբաղուի նրանով, ինչով ինք ապրում է»:

Հապա՞ Վիգէնը, Պուրն Համոսի զաւակ մեր սիրելի Վիգէնը (Զաքարեան), անսալով իր արեան կանչին, «եարի փոխան զէնք գրկեց» ու գնաց իր երիտասարդ կեանքը ընծայաբերելու Արցախեան անժամանցելի պայքարին, որովհետեւ ձայն մը հնչած էր Ղարաբաղի Հայոց լեռներէն:

Այսօր մեզմէ ո՞վ չի յիշեր Լիբանանի քաղաքացիական կռիւները եւ հայկական թաղամասերու պաշտպանութեան գործին լծուած մեր աննման տղաքը, հերոսական Պուրն Համոսի հերոս զաւակները, որոնց շարքին էին Հ.Մ.Ը.Մ.ական բազմաթիւ տղաք: Եւ դեռ կարելի՞ է մոռնալ պատնէշի վրայ ինկած Հ.Մ.Ը.Մ.ական պատասխանատու եղբայրներ՝ Վարդգէս Տէր Կարա-

պետեանը, Լեւոն Պէրպէրեանը, Ներսէս Խիտապէրտեանը եւ ուրիշներ...:

Այս բոլորը կը փաստեն, որ Հ.Մ.Ը.Մ.ի ուխտն ու երդումը հանդիսաւոր օրերու, խաղաղ օրերու պատշաճ արտայայտութիւններ չեն, այլ՝ նուիրումի, գոհողութեան եւ ծառայութեան մնայուն ուղեգիծ են:

Այս ստորոգելիներու շնորհիւ է, որ այս միութիւնը կրցաւ իրագործել իր երկար անունին ամբողջական իմաստը, բառ առ բառ՝ Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւն:

Պատճառը այս իրողութեան.

Արդարեւ, ամէն բանէ առաջ Հ.Մ.Ը.Մ. եղաւ հայ, այս բառին խորագոյն ու պարզագոյն իմաստով: Հաւատարիմ մնաց մեր ազգային իտէալներուն: Նահատակներու զաւակներուն կողմէ հիմնուած՝ իսկապէ՛ս որ ջանաց մեր նահատակներու գաղափարներէն քաղել իր ներշնչումները եւ կեանքի մէջ ըլլալ անոնց անմահ երազին դրօշակակիրը: Իր ամէն մէկ հաւաքոյթը, ժողովը, արշարը, բանակումը, մարզական փորձերն անգամ ծառայեցին նորահաս սերունդներու հոգիներուն մէջ վառ պահելու հայու ապրումները: Գուրգուրաց մայրենի բարբառին վրայ, գուրգուրաց մեր աւանդութիւններուն վրայ. աշխատեցաւ իր դրօշին տակ համախմբուած պատանիներու հոգիէն ներս արմատացրնել Հայ Եկեղեցւոյ եւ Մայր Հայրենիքի սերը: «Մեզմէ *n*^oվ այս կամ այն ձեւով, աւելի կամ նուազ ժամանակով՝ իր բաժինը չէ ստացած Հ.Մ.Ը.Մ.ի հայաշունչ մթնոլորտէն, երբ կը հագուէր սկառուտական տարապը եւ մէջքին կը կապէր «Բարձրացիր-Բարձրացուր» նշանաբանը կրող սկառուտի գօտին: Կամ *n*^oվ աւելի չէ հայացած դիտելով հպարտ տողանցքը անոր մարզիկներուն՝ «Յա-

նաջ Նահատակ» քայլերգի հնչիւններով» (Մ. Իշխան):

Խօսքը մեծանուն հրապարակագիր եւ գրագէտ Մի-
նաս Թէօլէլեանին է. «Ինչո՞ւ արցունք տամկացաւ
մեր կոպերուն տակ, երբ մանուկ, պատանի ու
երիտասարդ Հ.Մ.Ը.Մ.ականներու բանակը,
հպարտ ու պղնձադէմ, ծփացող բազմութեան
ծափերու որոտին ու կոկորդներու մէջ բռունցք
դարձող յուզումին դէմ յանդիման, իր դրօշնե-
րուն վրայ պտըտցուց ապրելու ուխտը մեր ժո-
ղովուրդին»:

Այո՛, մեր տարագիր ժողովուրդը իր նորահաս սե-
րունդին մէջ կ'ուզէր տեսնել ո՛չ միայն պարտականու-
թեան գիտակից հայ սկառուտը, այլեւ՝ «Մենք անկեղծ
զինուոր»ը, ո՛չ միայն բաժակ ապահովող մարզիկը,
այլեւ՝ հայ մկանին ուժը յաւերժացնողը:

Զուր տեղ չէր, որ Երջանկայիշատակ Զարեհ Ա. Կա-
թողիկոս Հ.Մ.Ը.Մ.ի յուշամատեանին մէջ կ'արձանագ-
րէր հետեւեալը. «Հայ ազգի կեանքին մէջ պատա-
հած հրաշքներէն մէկն է, անտարակոյս, կազմու-
թիւնն ու պարգացումը Հ.Մ.Ը.Մ.ին»:

Նոյնը երկնեց Ծաւարշ Քահանայ Մեհրապեան, ի
տես՝ նահատակ ցեղի ժառանգորդներուն միջազգային
բեմերու վրայ խլած մետալներուն, ըսելով,

- Ես կը հաւատամ հրաշքի:

Գործուող հրաշքը կը վկայէ, թէ կայ նոյնիքն հրա-
շագործը, որ կը կոչուի ՀԱՅ ՄԱՐՄՆԱԿՐԹԱԿԱՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆ:

«Այս միութիւնը հայութեան համար եղաւ իս-
կապէս ԸՆԴՀԱՆՈՒՐ միութիւն: Հ.Մ.Ը.Մ.ի
ակումբներուն մէջ եւ մարպադաշտերուն վրայ
էր որ քով-քովի եկան եւ եղբայրացան դպրոցա-

կանը, արհեստաւորը, բարեկեցիկ ընտանիքի
պաւակը, օրուան հացի կարօտ կօշկակարը, այն-
թապցին, քիչիսցին, մարաշցին, մշեցին, ուրֆա-
ցին քով-քովի եկան եւ պիրար կոչեցին «եղբայր»:

1998ի ամբան, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչու-
թիւնը, Համա-Հ.Մ.Ը.Մ.ական Վեցերորդ Ընդհ. Բանա-
կումին առիթով, պաշտօնական տեսակցութիւն մը
ունեցաւ Հայաստանի Նախագահ Պրն. Ռոպէրթ Քո-
չարեանին հետ: Նախագահ Քոչարեանին առաջին
հարցումը եղաւ. «*Դուք ինչն՞ է իրարու քոյր եղբայր
կը կոչէք*»: Հարցումը տեղին էր: Ատենապետ Տոքթ.
Միսաք Արզումանեան ճիշդ բանաձեւելով ըսաւ.
«*Հ.Մ.Ը.Մ.ը ծնաւ ջարդէն անմիջապէս ետք: Նոր
սերունդը որք ու անտէր էր: Հ.Մ.Ը.Մ. կեանքի
կոչուեցաւ, որպէսզի այդ որբերը հաւաքէ եւ
ծնողքի դեր կատարէ անոնց: Այդ երեխաները
քոյր, եղբայր չունէին, ջարդուած կամ կորսուած
էին, իրարու սկսան քոյր-եղբայր կոչել: Այդպէս
ալ մնաց*»:

Հ.Մ.Ը.Մ.ը աշխատեցաւ ընտանեկան մեծ յարկի մը
տակ ընդհանրական եւ մը ստեղծել, առանց դասա-
կարգային, տեղացիական եւ յարանուանական խտրու-
թեան:

Սրտերը միացուց, կամքերը միացուց, սփիւռքը կա-
պեց Հայաստանին:

Քանզի, «*ուր որ գնաց,
Սուրիոյ աւապին,
Փարիզի մայթին,
Նեղոսի ափին,
Իր միւս ոտքը խրեց Մասիս լեռան
ձիւնին մէջ*»:

Այո՛, ֆութպոլն ու պասքեթպոլը, գայլիկն ու սկաուտը իրենց կիրարկած օրէնքներով մէկ են բովանդակ աշխարհի երեսին, բայց Հ.Մ.Ը.Մ.ը շնորհիւ իր ժառանգած Հայկազեան ոգիին, կրցաւ անոնց տալ ազգային նկարագիր, զանոնք մկրտեց հայոց գաղափարական աւազանին մէջ եւ կեանքի կոչեց հայկական ոճով:

Հ.Մ.Ը.Մ. այս չորս տառերը դարձան բռնորին հարագատ, բռնորին սիրելի՛ իբրեւ հայաշունչ մթնոլորտի խորհրդանիշ, հայակերտու՛մի ծրագիր, ազգանուէր գործ, իրա՛ւ մարդ պատրաստող կազմակերպութիւն:

Վ.Տ.ԿԱՐԱՊԵՏԵԱՆ

Ահա՛ թէ ինչո՞ւ Հ.Մ.Ը.Մ. այսքան հարագատ կը մնայ իր ժողովուրդին: Եւ ահա՛ թէ ինչու հայ ծնողներ այնքան վստահութեամբ Հ.Մ.Ը.Մ.ին կը յանձնեն իրենց զաւակները, որովհետեւ հայ պիտի մեծնան: Մեր բազմութիւններու այս վստահութիւնն է ահա, որ 80 տարիներէ ի վեր Հ.Մ.Ը.Մ.ը կը պահէ կենսութեան, բարգաւաճ ու տարածուն:

Որովհետեւ,

«Ան չեղաւ սոսկ Մարտական Միութիւն:

Չեղաւ սոսկ Սկաուտական Միութիւն:

Այլ՛ դպրոց իր մարդակերտիչ եւ հայակերտիչ ծրագրով:

Առաքելութիւն՝ իր վեհ սկզբունքներով ու ապնուագոյն իտէայներով:

Հայրենիք՝ իր իւրայատուկ մթնոլորտով, իր քարձր դրօշով, իր յաւերժաբազում պատգամով»:

(Արամ Ա.)

Յայտնի մտաւորական Սիմոն Սիմոնեան իր գրութիւններէն մէկուն մէջ կ'ըսէ հետեւեալը.

«Ու մեր այբուբենին մէջ ամէնէն աւելի սիրեցի Հ. գիրը, որով կը սկսէին Հայր, Հայկր, Հայրենիքը, Հայաստանը, Համապասապը, որմէ պիտի ծնէր Հ.Մ.Ը.Մ.ը Հալէպի մէջ: Վերջինն ալ Հ.ով կը սկսէր: Հպարտութիւնը ինքն ալ կը սկսէր զինք բնորոշող տառով:

«Իրաւունք ունէր քանաստեղծը (Վահան Թէքէեան), ըսելու որ մենք հացի, օդի ու ջուրի չափ պէտք ունինք Հպարտութեան»:

Հ.Մ.Ը.Մ. մեզի սորվեցուց այն ինչ որ ամէնէն աւելի կը պակսէր մեզի՝ հպարտութեան զգացումը եւ յաղթանակի ծարարը: Հ.Մ.Ը.Մ. ՅԱՂԹԵՂ ՍՈՐՎԵՑՈՒՑ ՄԵԶԻ: Հ.Մ.Ը.Մ.ի այդ համեստ ֆութպոլիստները իրենց արձանագրած յաղթանակներով եւ շահած բաժակներով միլիոն «ՍԷ-ՍԷ» արիւն ներարկեցին ջարդի ու աքսորի արհաւիրքէն նոր ելած ու գաղթականի հոգեբանութեան մէջ եղող հազարաւոր երիտասարդներուն:

*Հ.Մ.Ը.Մ.ը երիտասարդական հայաշունչ
ոգիի վառարանն է:*

ԳԱՐԵԳԻՆ Ա.

Այդ օրերուն ամէն խաղացող իր կօշիկը ինք կը գնէր եւ 2 - 3 տարի կը հագուէր. առաւել կը վճարէր ցենզ, որովհետեւ անոր մէջ կը տեսնէր բարոյական նշանակութիւն. այնքան մը՝ որ 19ամեայ սկ. խմբապետ ռումանահայ Նուպար Անեագեան, երբ բժշկական սխալ դարմանումի մը հետեւանքով կը մահանայ, իր ծերունի հայրը, տղուն քառասունքէն ետք, եկեղեցիէն դարձին, կը հանդիպի Հ.Մ.Ը.Մ.ի ակումբ եւ վարչութեան ներկայանալով լալագին կ'ըսէ.

«Եկայ վճարելու վաւկիս յետնեայ ցենզի պարտքը. կը խոստանամ վճարել ասկէ ետքն ալ, միայն իր անունը մի՛ ջնջէք ձեր ոսկեայ տոմարներէն»:

Հ.Մ.Ը.Մ.ի շարքերը տարագ չեն՝ աչքեր լեցնող, այլ դպրոց են:

ԳԱՐԵԳԻՆ Ա.

Մէկ ուրիշ դրուագ.

1946ին, Հ.Մ.Ը.Մ.ի Սուրիոյ Շրջանային Վարչութիւնը արշաւ մը կը կազմակերպէ դէպի Գամիշլի, խանդավառելու համար Ծեղիբէի հայ գիւղերու բնակչութիւնը: 400 մարզիկներ եւ սկաուտներ, ընդ խմբապետութեամբ՝ Լեւոն Պապուզեանի, Շաբաթ գիշեր, *օթոպիւս*երով ճամբայ կ'ելլեն Հալէպէն: Առաւօտուն կը հասնին Տէր Զօր: Եղեռնի յիշատակին կառուցուած մատրան մէջ աղօթելէ ետք, կ'ուղղուին դէպի Գամիշլի եւ ահա անօթութեան եւ ծարաւի պատճառով դժգոհութիւնները կը բարձրանան: Խմբապետը տեղի չի տար: 5 ժամ ճամբայ կտրելէ ետք, անապատի ամա-

յութեան մէջ կը նշմարեն, որ զիրենք կանխող *օթոպիւս*ը խանգարուած է: Դժգոհութիւնները կը կրկնապատկրւին: Ծատեր կէս ճամբէն ետ դառնալու արտայայտութիւններ կ'ունենան: Խմբապետը, որ մինչ այդ լուր ու մունջ կը հետեւէր բոլոր անցուդարձերուն, տղոց դառնալով՝ բարկացած կ'ըսէ.

«Ամօ՛թ ձեզի. մեղք ձեզի տրուած դաստիարակութեան: Դուք գիտէ՞ք թէ ուր կը գտնուիք: Այս վայրը հայ ժողովուրդի սպանդանոցն է: Հոս է որ ձեր հայրերը եւ մայրերը ջարդուեցան կացիներով եւ սուիներով: Այս վայրին անունն է Մարկատէ: Անոնք իրենց պապենական տուներէն մինչեւ հոս քալելով եկած են, առանց տրտունջքի, շաբաթներ տելող չարչարանքէ եւ անօթութենէ ետք: Դուք ոչ իսկ մէկ օր դիմացաք: Մենք պարզապէս ուղեցինք փորձել ձեր հայրենասիրական ոգին եւ տոկալու կարողութիւնը: Եւ փորձը ցոյց տուաւ, որ դուք արժանի չէք հայ կոչուելու: Ես որոշած եմ մինակս շարունակելով որ կ'ուղէ թող միանայ ինծի: Օթոպիւսը խանգարուած չէ. պարզապէս այդպէս ձեւացուցինք՝ շօշափելու համար ձեր հակազդեցութիւնը»:

Խմբապետին այս խօսքերը շանթահարիչ ազդեցութիւն կ'ունենան: Բոլորը ցնցուած՝ կը զգան հարուածին ծանրութիւնը եւ անզգալաբար բոլորը քով-քովի գալով ծունկի կու գան կէսօրուան այրող արագներուն վրայ եւ խոնաւ աչքերով միաբերան կ'երգեն հրաշալի «Տէր Ողորմեա»ն: Խմբապետը մինչ այդ չկարենալով զսպել իր զգացումները, յամրաքայլ կը բարձրանայ *օթոպիւս* եւ հոնքուր, հոնքուր կու լայ: Ուխտը կատարուած էր:

Հ.Մ.Ը.Մ.ի պատմությունը լեցուն է նման սրտառույզ դրուագներով. ներկայացնենք մեկ ուրիշը.

Սուրիոյ ֆութպոլի ազգային խումբը, որ մեծամասնութեամբ Հ.Մ.Ը.Մ.ական մարզիկներէ բաղկացած էր, եւ դրացի երկիրներուն մէջ տարած էր փայլուն յաղթանակներ, պարտութիւն մը կը կրէ Թուրքիոյ ազգային խումբէն, Անգարայի մէջ, 1951ին: Խումբին մասկազմող խաղացողներէն Վազգէն Տէր Ղուկասեան իր եւ ընկերներուն անունով կը պատմէ հետեւեալը.-

Խաղի սկզբնաւորութեան, երբ զինուորական նուագախումբը կը հնչեցնէ Թուրքիոյ ազգային քայլերգը, բոլորս պաղ քրտինք մը կը թափենք, կ'ալլալլիինք, ատելաժառ զգացումներ կը պատեն մեր սրտերը: Ճնշող այդ մթնոլորտին մէջ մեր տղաքը չեն տար իրենցմէ սպասուած ակրնկայութիւնը եւ Սուրիոյ ազգային խումբը կը պարտուի 7 - 0 արդիւնքով:

Իսկ եղբ. Սահակ Եղոյեան կը պատմէ.

- Հայրենի «Արարատ» խումբին հետ մրցում մը ունէինք Հալէպի մէջ: Ակումբէն դաշտ գացած միջոցիս եղբ. Լուտերին (Մասպանանեան) դառնալով հարց տուի. «Ո՞ր խումբին յաղթելը կ'ուզես»: Պատասխանը եղաւ շատ արագ. «Հայրենի խումբին յաղթելը կ'ուզեմ»: Իջայ դաշտ: Խաղի ամբողջին 10 վայրկեան մնացած էր եւ արդիւնքը՝ մեկ հաւասար: Անմիջապէս յիշեցի եղբ. Լուտերին խօսքը: Յետսապահ գիծին վրայ ըլլալով՝ դիտումնաւոր կերպով սխալ մը գործեցի: Իրաւարարը «փենալթի» մը շնորհեց հիւր խումբին: Արդիւնք՝ 2 - 1 ի նպաստ հայրենի խումբին: Դաշտէն ակումբ վերադարձի ճամբուն վրայ, եղբ. Լուտեր ձեռքը ուսիս դնելով ըսաւ. «Ապրի՛ւ տղաս»:

*Հ.Մ.Ը.Մ. եղաւ մանաւանդ եւ է՛ այսօր ալ,
բարոյական յաղթանակներու անհաւասարե-
լի ախոյեան միութիւն: Հաւատարիմ՝ իր հե-
թանոս պապերէն իսկ կտակուած աւանդնե-
րուն, մեր ժողովուրդին տուաւ բարոյական
արժէքներու նոր հարստութիւններ:*

ՅՈՎՀԱՆՆԵՍ ՏԵՐ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

- Հալէպի զօրաւորագոյն խումբերէն Ահլիի դէմ մրցումի մը ընթացքին զօրաւոր հարուած մը ստացայ: Երկու ատամներս փշրուեցան: Պատասխանատու խնդրեց որ լքեմ խաղը. ես չընդունեցի. ըսի միայն ին-
ծի թաշկինակ մը տուէք, ուրիշ ոչինչ: 2 - 0 արդիւնքով պարտուած էինք: Հակառակ ասոր շարունակեցի եւ եր-
կու կոլ նշանակեցի, մինչ արիւնը կը հոսէր բերանէս: Խաղը ւարտեցաւ հաւասարութեամբ:

*Այդ տղոց կեանքը հեփիաթ չէ, վէպ չէ՛, որ
կարդաս՝ ժամանց ընես ու յետոյ նետես մէկ
կողմ, ինչպէս ժամանակավրէպ պատմու-
թիւն, ինչպէս հին լաթի կտոր: Ո՛չ, այդ տղոց
կեանքը դաստիարակչական դպրոց մըն է,
հաւատքի, գաղափարի մաքրամաքուր տա-
նար մըն է, որմէ պէտք է հաղորդուի ամէն
Հ.Մ.Ը.Մ.ական:*

ՍԱՄՈՒԷԼ ՄԿՐՏԻԶԵԱՆ

- Բամպակի տօնահանդէսի մրցաշարքի մը ընթաց-
քին երկու անգամ հաւասար մնացինք Ահլիի հետ: Եր-
րորդ մրցումին, իրաւարարներու մեղսակցութեամբ,

2 - 1 արդիւնքով պարտուած էինք մինչեւ խաղի աւարտէն 8 վայրկեան առաջ: Յանկարծ անտեղի կերպով վէճ մը ծագեցաւ իմ եւ իրաւարարին միջեւ: Վիճաբանութիւնը զարգացաւ եւ միջադէպ պատահեցաւ: Խաղը շուրջ 20 վայրկեան ընդհատուեցաւ: Ոստիկանութիւնը ձերբակալեց Հ.Մ.Ը.Մ.ական եղբայրներ: Իրաւարարը զիս դաշտէն դուրս դրաւ: Խաղը շարունակուեցաւ: Հ.Մ.Ը.Մ. կրկնապատկեց իր յարձակումները եւ խաղը վերջ գտաւ ի նպաստ Հ.Մ.Ը.Մ.ի՝ 3 - 2 արդիւնքով: Բաժակը մերն էր:

Այս միջադէպին համար յաջորդ օրը ես եւ ընկերներս բանտ տարուեցանք: Շաբաթ մը ետք, Սուրիոյ ֆութպոլի ազգային խումբը, որուն սիւներէն էի, մրցում մը պիտի ունենար ռուսական խումբի մը դէմ: Վերէն հրաման եկաւ բանտապետին, որպէսզի զիս ազատ արձակէ: Ըսի՝ մինչեւ որ միւս ընկերներս բանտէն դուրս չգան, ես դուրս չեմ ելլեր: Ի վերջոյ հարցը լուծուեցաւ: Խնդրանքս իրականացաւ: Կիրակի օր դաշտ իջայ հոգեկան բարձր տրամադրութեամբ: Շնորհիւ իմ մէկ փոխանցումիս, Սուրիոյ ազգային խումբը 1 - 0 արդիւնքով յաղթական դուրս եկաւ դաշտէն:

*

* *

1965.- Բախտորոշ թուական մը Հ.Մ.Ը.Մ.ի պատմութեան մէջ: Հ.Մ.Ը.Մ.ի Հալէպի ներկայացուցչական խումբը պիտի մրցէր Սուրիական Բանակի Ֆութպոլի խումբին դէմ: Յաղթականը պիտի հռչակուէր

Սուրիոյ ախոյեան: Ծակատագրական այս մրցումը խօսողը երբեմնի փայլուն յառաջապահ Եղբ. Ծորճիկ Ռասթվէլէնեանն է. «ինձի եւ խաղընկերներուս համար «Կենաց մահու» հարց էր, որովհետեւ Հ.Մ.Ը.Մ. ո՛չ միայն պիտի շահէր Սուրիոյ ախոյեանութեան պատուաբեր տիտղոսը, այլեւ՝ պիտի բարձրացնէր բոլորիս հոգեկանը, որուն այնքան կարիքը ունէինք այդ օրերուն:

Մրցումը սկսաւ չափէն աւելի պրկուած ջիղերով, որովհետեւ ինչպէս ըսինք, շահողը պիտի յայտարարուէր Սուրիոյ ախոյեան: Մենք առաւելութիւն մը ունէինք միւս խումբէն, այն իմաստով որ երթի մրցումին, որ տեղի ունեցած էր Հալէպի մէջ, 1-0 արդիւնքով առաւելութիւն մը ձեռք ձգած էինք արդէն, որով հաւասարութիւն մը բաւարար էր մեզի: Եւ յանկարծ պատահեցաւ անսպասելին. առաջին կիսախաղը աւարտեցաւ 1-0 արդիւնքով՝ ի նպաստ Սուրիական բանակի խումբին, հակառակ մեր տղոց թափած բուռն ճիգերուն:

Կիսախաղի դադարին, մեր պատասխանատուն տուաւ իր ցուցմունքները, միաժամանակ սրտի խօսող խօսքերով խրախուսեց եւ ոգեպիւնեց մեզ: Իջանք դաշտ բոլորովին տարբեր պատրաստութեամբ, հոգեկան բարձր տրամադրութեամբ: Մէկական առիժ կտրած էինք: Կանաչ դաշտին տէրը մենք էինք: Եւ ահա շատ չանցած Հ.Մ.Ը.Մ. նշանակեց հաւասարութեան իր կոյր: Ուրախութի՛ւն, բացագանչութի՛ւն: Հանդիսատես մեր եղբայրներուն եւ համակիրներուն ու-

ընտանիքները չափ ու սահման չունենք: Սրտատրոփ եւ նոյն ուժականութեամբ շարունակեցինք խաղը, արդիւնքը նոյնը պահելու համար եւ այդպէս ալ եղաւ: Խաղի 90րդ վայրկեանին, օրուան խօսնակը՝ Ատնան Պոպօ յայտարարեց. «Հ.Մ.Ը.Մ. ՍՈՒՐԻՈՅ ԱԽՈՅԵԱՆ: Տեսնելու քան էր դաշտ խուժող եւ ապա մեզ դիմաւորելու եկող մեր պանգուածին ուրախութիւնը»:

Այդ օր, հայ ժողովուրդի հարազատ զաւակները՝ Հ.Մ.Ը.Մ.ի անմահ տղաքը «Օգոստափառ կերտեցին նոր Արշալոյս»:

*

**

1995ի գարնան էր այս անգամ: Կը պատմէ Եղբ. Պետրոս Ծեմմեսեան. «Հ.Մ.Ը.Մ.ի ֆութպոլի ներկայացուցչական խումբը Լիբանանի ախոյեանութեան իր վերջին մրցումը պիտի խաղար Ահլի Սայտա խումբին դէմ, Պուրճ Համուտի քաղաքապետարանի դաշտին վրայ: Այդ մրցումին եթէ Հ.Մ.Ը.Մ. պարտուէր, պիտի փոխադրուէր երկրորդ դասակարգ: Պարագայ մը, որ երկրաշարժի ուժգնութեամբ կրնար ցնցել Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի բովանդակ ընտանիքը:

Առաւօտ կանուխ արդէն, «Վանայ Զայն»ի խօսնակը կոկորդը պատռելու գնով մէջ ընդ մէջ կոչ կ'ուղղէր Հ.Մ.Ը.Մ.ի համակիրներուն, որպէսզի խիտ շարքերով ուղղուին Պուրճ Համուտի դաշտ: Խօսնակին պերճախօս կոչերը կը յիշեցնէին Սասունցի Դաւիթի պատմութիւնը. «Ո՛վ քնած է, թող արթննայ, ով արթուն է թող ձին թամբէ»:

Մրցումէն բաւական առաջ արդէն դաշտին զոյգ թրիպիւնները լեցուած էին Հ.Մ.Ը.Մ.ի բազմահազար համակիրներով: Հ.Մ.Ը.Մ. այդ օր յաղթեց: Բ. դասակարգ չփոխադրուեցաւ: Անսահման ուրախութիւն եւ գիրկընդխառնում:

Քանի մը օր ետք «Ազդակ»ին մէջ կը կարդայինք. մրցումին օրը, Կիրակի առաւօտ կանուխ, երկու գայլիկներ Հ.Մ.Ը.Մ.ի եւ Եռագոյն դրօշակներով գաղտագողի կը մտնեն Պուրճ Համուտի Ս. Քառասնից Մանկանց եկեղեցին: Դրօշակները խորանին վրայ դրած՝ ծունկի կու գան աղօթելու, որպէսզի այդ օր Հ.Մ.Ը.Մ. յաղթէ: Քահանային անակնկալ մուտքը շփոթի կը մատնէ երկու գայլիկները, որոնք կը փորձեն փախչիլ: Քահանան կը թելադրէ որ չվախնան:

Կը հասկնայ եղելութիւնը եւ, ինք իր կարգին, խաչով եւ Աւետարանով կ'օրհնէ զոյգ դրօշակները ու ... Հ.Մ.Ը.Մ. կը յաղթէ»:

ԶԱՐԻՖԵԱՆԻ ՎԵՐՋԻՆ ՈՍՏՈՒՄԸ

Մատթէոս Զարիֆեան, միակ բանաստեղծը, որ ախոյեան մարզիկ էր միաժամանակ, Հ.Մ.Ը.Մ.ի Ա. Ողիմպիականին իրմէ ակնկալուած արդիւնքը չի տար երեք քայլ ոստումի աւարտական մրցումին: Երրորդ իսկ չի գար: Մրցակիցները, իրենց կողմէ, կը դիմեն դատաւորին, որ չորրորդ պատեհութիւն մը տրուի Զարիֆեանին: Այս վերջինը եղբայրներուն վերաբերումէն ծայր աստիճան զգացուած՝ գերագոյն ճիգով մը ինքզինք կը գերազանցէ եւ ոչ միայն կը հանդիսանայ առաջին, այլեւ կը կտրէ այդ խաղին մրցանիշը (*ոչ ոք գիտէր այն*

Ժամանակ, որ թորախտը բոյն դրած էր արդէն անոր կուրծքին տակ):

Եղբայրասիրութեան, ասպետական ոգիի ցուցանիչ Հ.Մ.Ը.Մ.ի անգիր եւ գրաւոր բռնոր սխրագործութիւնները եթէ մշակուին եւ մտնեն հատորի մը մէջ՝ ոչ միայն Հ.Մ.Ը.Մ.ին կ'ապահովեն ֆէր-Փլէյի բաժակը, եթէ օր մը ակումբի մը տրուի ան, այլեւ՝ աշխարհի երիտասարդութեան կը մատակարարեն մարգական ոգիի նոր աւետարան մը:

Յ. ԳԵՂԱՐԴ

ԵՐԿՈՒ Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆՆԵՐՈՒ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ 50 ՏԱՐԻ ԵՏՔ

Երկու հայեր, օր մը, Չիլիի մայրաքաղաք Սանթիա-կոյի մէջ իրարու կը հանդիպին: Երկուքին հասարակաց կայք կ'ըլլայ հայերէնը, որ մագնիսի նման կը քաշէ, կը միացնէ իրարու անձանօթ հայեր: Օտարութեան մէջ ապրողը միայն կը զգայ, թէ ի՛նչ կը նշանակէ օտար քաղաքի մը մէջ հայ մը տեսնել ու հետը հայերէն խօսիլ:

Հայու ճակատագիր: Միշտ սպասող մը պիտի գտնուի եւ ուրիշ տեղ՝ զինք գտնող մը:

Ի՞նչ պիտի պատմեն իրարու:

Տեսնենք:

Սուրճի ժամը հասած է արդէն: Կը խօսին հոսկէ-հոն-կէ եւ յանկարծ կը պարզուի, որ երկուքն ալ Հալէպէն գաղթած հայեր են: 50 տարի առաջ մէկը մեկնած է Հիւսիսային Ամերիկա, միւսը՝ Հարաւային:

Եւ յանկարծ կը պատահի աներեւակայելին...:

Եղբ. Գազէզեան Հալէպի իր կեանքին մասին խօսած ժամանակ ուրախութեամբ կ'ըսէ, թէ ինք ասեմին Հ.Մ.Ը.Մ.ի «Վրէժ» խումբէն ֆութպոլ խաղացած է:

Երկրորդին պատասխանը կ'ըլլայ շատ արագ.

- Ե՛ս ալ: Ու ոտքի կ'ելլեն:

Կրկին կը փաթթուին: Ամուր կը սեղմուին: ... Կու լան: Կը զգան թէ ինչքան յուզիչ է պահը: Երկար կը համբուրուին...:

Այնուհետեւ բաժակներ կը պարպուին, բաժակներ կը լեցուին:

Կը խմեն Հ.Մ.Ը.Մ.ի կենացը:

Կ'երգեն ցտեսութեան երգը:

Կը բաժնուին չուզելով:

Ու, հիմա, այս բոլորէն վեր, ու այս բոլորին հետ, ես ինչպէ՛ս մոռնամ ինչ, ո՛վ Հ.Մ.Ը.Մ., իմ սրբութի՛ւն սրբոց: Օրհնեա՛լ ըլլաս դուն, մեր հողմացրիւ ժողովուրդին ծոցէն ծնած հարազատ հայկազուն, որ գիտցար գաղթաշխարհի սա մո՛լթ քանապարհներուն վրայ յո՛յս եւ հաւատք ներշնչել մեր տարագիր բեկորներուն եւ զանոնք գիներ ազգային վնիտ հպարտութեամբ եւ յինելութեան խո՛ր գիտակցութեամբ, երբ անդին կար կալանաւո՛ր հայրենիք, ու... չկա՛ր: Դուն, ո՛վ սուրբ տանար, ինչպիսի՛ լուսեղէն տեսիլքէ առաջնորդուած, կազմեցիր փոքրաթի՛ւ խումբեր՝ պատանիներէ եւ երիտասարդներէ եւ անոնց տուիր հա՛յ գինուոր դառնալու արդար հպարտութիւնը:

ՍՈՒՐԷՆ ՆԱԶԱՐԵԱՆ

ՕՐԻՆԱԿ ՄԸՆ ԱԼ ՀԱՅԱԶԳԻ ՉԱԻԱԿ,
Հ.Մ.Ը.Մ.Ի ԲԱՐԵԿԱՄ ԵՈՒՐԻ ԸՈՐՔԱՅԵՒԷՆ

Ինչպէս ծանօթ է, 1998ի Մայիս 29ին, Ֆրանսայի Ազգային Ժողովը պաշտօնապէս ճանչցաւ Հայկական Ցեղասպանութիւնը: Ծորքայեւ ուրախալի այդ լուրը կը լսէ Մարոքի մէջ, ուր ան Ֆրանսայի խումբին հետ Մոնտիալի նախապատրաստութեան մրցում մը կը կատարէր տեղական կազմի մը դէմ: Մրցումէն ետք, ֆրանսական «L'Equipe» թերթին տրուած հարցազրոյցի մը մէջ ան կ'ըսէ, թէ *«Թուրքերու կողմէ կատարուած Հայկական Ցեղասպանութեան ճանաչումին լուրը շատ ոգեւորեց զիս: Ուրեքի դաշտին վրայ բան մը ընել էւ կո՛ւ նշանակեցի»:*

Մոնտիալին բացման օրը, Ծորքայեւ Հայկական Ցեղասպանութեան անդրադարձող պաշտօնական իր երկրորդ արտայայտութիւնը կ'ունենայ, երբ նախագահ Շիրաքի հետ Հայաստան այցելելու հրաւերը ընդունելով, ֆրանսայի թիւ մէկ վարիչին կ'ըսէ. *«Մեծ հայրս տարագրուած հեռացաւ Հայաստանէն, իսկ ես պաշտօնական պատուիրակութեամբ մը պիտի ժամանեմ»:*

Հայազգի այս բացառիկ մարզիկին տաղանդն ու կարողութիւնները նախատեսել կու տան, որ ան պիտի չբարարուի ֆութպոլի ոսկեմատեանին մէջ ցարդ իր արձանագրած յաջողութիւններով: Ծորքայեւ դեռ երկար ժամանակ իր անունը յիշել պիտի տայ ֆութպոլի սի-

րահարներուն եւ իր ազգի զաւակներուն, որոնք, ուր որ ալ գտնուին, պիտի փափաքին շնորհաւորել մարզական իր յաջողութիւնները եւ հայրենասիրական քաջարի կեց-
ւածքները:

Ճորքայեւի կացուածքները խրախուսիչ եռանդ եւ
աւիշ կու տան ազգային մեր պահանջատիրութեան,
միաժամանակ՝ շառաչուն ապտակ մը «միայն մէկ հայ,
այն ալ թանգարանի մէջ» պահել ուզողներուն, թէ՛ Ցե-
ղասպանութենէն մենք ո՛չ միայն վերապրեցանք, այ-
լեւ՝ «վեր, աւելի՛ վեր» տեսիլքով ապրեցանք:

*Առիթով մը, երբ պգտիկներս՝ Տենիս եւ
Նուրի վերադարձան Կապոյտ Խաչի մէկ ճամ-
բարէն (մօտաւորապէս 20 տարի առաջ)
անոնք Նոաֆոյն դրօշով շրջեցան տան չորս
կողմը: Այդ մեծապէս խորհրդանշական էր եւ
ինձի համար՝ աննկարագրելի հաճոյք:*

ՄԱՐԻ ՃՈՐՔԱՅԵԻ

ԱՅՍ ԲՈԼՈՐԷՆ ԵՏՔ,

Կրնանք անվարան հաստատել,

ՈՐ՝

Հ.Մ.Ը.Մ. մարզական պարզ միութիւն մը չէ, Ֆութպո-
լի խումբ չէ, «Club» չէ:

Հ.Մ.Ը.Մ. սկստուտական միաւոր մը չէ, սուլիչ ու փող-
կապ չէ՛. չէ եղած երբեք:

Հ.Մ.Ը.Մ. Ծրագիր ու կանոնագիր չէ՝ բառային չոր
հասկացողութեամբ: Հ.Մ.Ը.Մ.ը կարելի չէ
կանոնագրութեամբ, կառոյցով հասկնալ,
ըմբռնել եւ բացատրել: Հ.Մ.Ը.Մ. անգիր
օրէնքներու շարահիսութիւն է:

Հ.Մ.Ը.Մ. Մարգա-սկաուտական միութիւն մը ըլլալով
հանդերձ, ազգային կառոյց, նկարագիր ու
ձգտում ունեցող կազմակերպութիւն է:

Հ.Մ.Ը.Մ. Կազմակերպութիւն ըլլալէ առաջ ոգի՝ է,
մթնոլորտ է, բռունցք է, մնայուն պայքար է,
գաղափարական ամրակոտ բերդ է, ազգա-
յին արժէք է, հաւատք է, խունկ ու աղօթք է,
յոյս է, լոյս է, տիտղոս է, պատիւ է:

Հ.Մ.Ը.Մ. Հոգիները կամբջող կազմակերպութիւն է:

Հ.Մ.Ը.Մ. Հայ ժողովուրդի գուրգուրանքին գումարն է:

Հ.Մ.Ը.Մ. Մարդկային եւ ազգային առողջ ապրումնե-
րու հաստատութիւն է, որուն մէջէն անցնող
երիտասարդը կը զգենու տիպար մարդու,
վաւերական հայու կերպարը:

Վերջապէս՝

Հ.Մ.Ը.Մ. Հայութի՛ւն է: Հայրենի՛ք է: Եկեղեցի՛ է:
Հայոց պատմութի՛ւն է:

Այս բոլորն է Հ.Մ.Ը.Մ.ը:

Ու բոլորի՛ն է Հ.Մ.Ը.Մ.ը:

ՎԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ

*

* *

Դուք այստեղ կը ներկայացնէք մեր ժողովուրդի կեանքէն ներս նուիրական արժէք մը, որ Հ.Մ.Ը.Մ.ն է: Հ.Մ.Ը.Մ.ը կառոյց չէ, այլ եզակի երեսոյթ մըն է, որ իրադէս վճռադրոշմ դեր կատարած է մեր կեանքէն ներս, յատկադէս Սփիւռքի մէջ:

Իմ հոգետր ծառայութեանս ընթացքին, թերես ամէնէն լաւ ներշնչումով եւ ադրումով ճառերը խօսած եմ, երբ Հ.Մ.Ը.Մ.ի հետ եղած եմ, Հ.Մ.Ը.Մ.ի առիթով խօսած եմ, որովհետես տեսած եմ Հ.Մ.Ը.Մ.ի գործը եւ վկայած եմ այդ գործին մէջ: Ես տեսականօրէն կամ պգացականօրէն չեն խօսած Հ.Մ.Ը.Մ.ի մասին:

Տեսած եմ, ադրած եմ, ուրախացած եմ, ներշնչուած եմ եւ այդ բոլորին մասին երբ մարդ կը խօսի, իր խօսքը տարբեր բնոյթ կ'ունենայ, տարբեր ներշնչում, հաւատք եւ տեսիլք կ'ունենայ:

Մարդ իրադէս տարբեր կ'ըլլայ, երբ Հ.Մ.Ը.Մ.ին մէջ ըլլայ, Հ.Մ.Ը.Մ.ին հետ ըլլայ եւ Հ.Մ.Ը.Մ.ին անմիջականօրէն հաղորդ. ըլլայ, որովհետես ինծի համար Հ.Մ.Ը.Մ.ը միայն գայլիկը, սկառուտը, մարսիկը կամ ժողովականը չէ, այդ բոլորը Հ.Մ.Ը.Մ.ի արտայայտութեան ձեւերն են, եղանակներն են: Հ.Մ.Ը.Մ.ը ոգի է, հաւաքական հաւատք է, հաւաքական կամք է, հաւաքական ծառայութիւն է, հաւաքական տեսիլք է եւ ճիշդ անոր համար Հ.Մ.Ը.Մ.ը մեր ժողովուրդի հա-

աքական կեանքին մէջ իր առանցքային ներկայութիւնն ու վճռական դերակատարութիւնը ունեցած է: Հ.Մ.Ը.Մ.ը մեր ժողովուրդի հաւաքական սրտին մէջ իր տեղը ունեցած է:

Եթէ Հ.Մ.Ը.Մ.ը մեզի համար սոսկական մարպական միութիւն մը ըլլար, ամէն անգամ որ ան յարտըւեր դաշտին վրայ, մենք յիտի չսիրէինք զայն, սակայն մենք Հ.Մ.Ը.Մ.ը սիրեցինք նոյնի՛սկ իր յարտութեան մէջ, որովհետեւ Հ.Մ.Ը.Մ.ը մեզի համար դաշտին վրայ երեցող մարպիկներու խումբը չեղաւ: Այն ինչ որ մեր ժողովուրդին մէջ բարութեան, գեղեցկութեան, արժէքներու, երազներու եւ ձգտումներու համապօր էր, մենք այդ մէկը տեսանք Հ.Մ.Ը.Մ.ի մէջ:

Հ.Մ.Ը.Մ.ը հայ դոյրոց եղաւ, հայ ակումբ եղաւ, Հայաստան եղաւ, ապառ ու անկախ Եռագոյնով Հայաստան դարձաւ, նոյնի՛սկ եկեղեցի եղաւ որոշ չափով: Այլ խօսքով, Հ.Մ.Ը.Մ.ը մեր ժողովուրդի հոգեմտաւոր արժէքներուն ոչ միայն շտեմարանը դարձաւ, այլե՛ն՝ եղաւ դոյրոց մը, որուն արժէքներով կազմաորւեցան Հ.Մ.Ը.Մ.ին անդամակցողները: Ինչ որ կ'ըսեն դուք լաւ կը զգաք իբրեւ Հ.Մ.Ը.Մ.ականներ: Մենք այդ բոլորը տեսանք, ճիշդ է Հ.Մ.Ը.Մ.ական չեղանք, բայց տեսանք ու վկայեցինք գոյութենական կերտով: Ինչո՞ղէս 80ամեակի կոնդակիս մէջ ըսի, ես երբեք յիտի չկարենամ հասկնալ մեր ժողովուրդին վերջին 80 տարիներու յատմութիւնը առանց Հ.Մ.Ը.Մ.ին:

ԱՐԱՄ Ա.

Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ

*

* *

Հ.Մ.Ը.Մ. եղաւ աշխարհացրիս սփիւռքի հայրենա-
պուրկ սերունդներուն հոգիներուն մէջ առորդ, շնչող
ու մանաւանդ ներշնչող *Անհող Հայրենիք*:

Հ.Մ.Ը.Մ. եղաւ Մեծ Եղեռնի ապագաջինջ սղառնա-
լիքին Կոհ գացած սերունդին անբակուած հոգիներ-
ուն մէջ նոր սերունդներուն երթը երաշխաւորող *Յոյս*:

Հ.Մ.Ը.Մ. եղաւ սփիւռքի այլասերող գաղթավայ-
րերու մէջ հետպիտէ բարեկեցիկ կեանք առորդ մեր
նոր սերունդի կեանքը հայութեամբ կռանող կրանիթ-
եայ *Կամք*:

Հ.Մ.Ը.Մ. եղաւ մեր ապգային կեանքի ծով կարիք-
ներուն գոհացման համար ծառայութեան ու նուիրումի
բարձրագոյն *Գիտակցութիւն*:

ԳԵՂԱՄ Ծ. ՎՐԴ. ԽԱԶԵՐԵԱՆ
Առաջնորդ Լիբանանի Հայոց Թեմի

*

* *

Հայ ժողովուրդի անկորնչելի հարստութեան դրօ-
շակիրը դարձաւ Հ.Մ.Ը.Մ.ի առապանէն վերածնած հայ
երիտասարդը:

Մռայլ հորիպոններու դիմաց ընդմիշտ յոյսի ջահա-
կիրը մնաց ղատուով երդուեալ Հ.Մ.Ը.Մ.ականը:

Արդարօրէն առողջ դաստիարակութեան եւ նկա-
րագրի կերտման ձուլարանը եղաւ Հ.Մ.Ը.Մ.ը:

ՍՈՒՐԷՆ ԱՐՔ. ԳԱԹԱՐՈՅԵԱՆ
Առաջնորդ Բերիոյ Հայոց Թեմի

*

* *

Ութ տասնամեակներու ընթացքին, հաստատարիմ իր նուիրական առաքելութեան, Հ.Մ.Ը.Մ.ը ամբօրէն դարբնեց մեր մատղաշ եւ երիտասարդ սերունդներու հոգիները: Հայ արիին ու արենոյշին, արծուիկին ու գայլիկին համար եղաւ Հայ Դոյրոց, Հայոց Պատմութիւն, Հայ Մշակոյթի գանձարան, Վարդան Մամիկոնեան, Ղեւոնդ Երէց եւ մեր կեանքին մէջ տողանցող յայտնի եւ անյայտ խոնարհ հերոսներու վկայարան:

ՄՈՒՇԵՂ ԵՊՍ. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ

Առաջնորդ Արեւմտեան

Մ. Նահանգներու Հայոց Թեմի

*

* *

Հ.Մ.Ը.Մ.ը իբրեւ դոյրոց գործեց ու կը շարունակէ գործել, դատրաստելով տիոյար հայեր՝ գիտակից իրենց դատմութեան, դահանջատիրական դայքարին եւ ազգային անժամանցելի իրաւունքներուն:

Հ.Մ.Ը.Մ.ը իբրեւ բուրայ իր հուրով բիրեղացուց սրտերն ու հոգիները հայ մանուկին, դատանիին ու դարձանուիիին, երիտասարդին ու երիտասարդուիիին, վանոնք վերածելով վեհութեան, ազնուութեան, մարդկայնականութեան շտեմարանի:

ՍԵՊՈՒՀ ԵՊՍ. ՍԱՐԳԻՍԵԱՆ

Կաթողիկոսական Փոխանորդ Բուէյթի եւ

Արարական Ծոցի Երկիրներու Թեմի

*

* *

Հ.Մ.Ը.Մ.ի դիսցալն գայլիկները, արիները, արե-
նոյշներն ու մարպիկները, իրենց տողտատեայ կամ-
քով ու հաատքով տատռեր էին քողը սուգին, շղար-
շը մահուան ու վառեր խարոյկը կեանքին, խարոյկը
մեր մեծ յաղթանակին:

Հ.Մ.Ը.Մ.ը հակառակ իր կեանքէն ներս տիրող
դժուարին տայմաններուն, իր անձնուէր մշակներով
շեփորած է միշտ ապատութիւնն ու անկախութիւնը հա-
յուն, եւ տատգամած է բոլորին անխտիր, դառնալ կա-
մաոր, նուիրեալ սղասարկուները մեր մեծասքանչ լեզ-
ւին, մեր լոյս հաատքին, մեր մշակոյթին, մեր տաշ-
տելի հայրենիքին, հերոսածին Ղարաբաղին եւ մեր
արդար դատին:

ՄԱՀԱԿ ԱՐՔ. ԱՅՎԱԶԵԱՆ
Առաջնորդ Յունաստանի Հայոց Թեմի

*

* *

Կազմակերտուեցէ՛ք, ազնուացէ՛ք, բարձրացէ՛ք
որքան կրնաք, լեցուցէ՛ք ձեր սիրտն ու միտքը, վասնզի
դո՛ւք տիտի ըլլաք վաղուան սրբազան Հայրենիքին
հրաշակերտ տաճարին սիւները:

ԶԱԲԷՆ ԱՐՔ. ՏԷՐ ԵՂԻԱՅԵԱՆ
Պատրիարք Հայոց

Պոլիս, 8 Յունիս 1919

*

* *

Մեծ է դերը Հ.Մ.Ը.Մ.ին:

Այս դերը լաւ ըմբռնելու համար, անհրաժեշտ է ազգային բարձր գիտակցութիւն, այսինքն մեր ուժերու, մեր արժէքի, մեր ընթացքի եւ նոյատակի տայծառ իմացում:

ՆԻԿՈՒ ԱՂԲԱԼԵԱՆ

*

* *

Ամէն մէկ Հ.Մ.Ը.Մ.ականի մէջ՝ աճիւն մը կայ մեր հերոսներէն, որովհետեւ ամէն մէկ անդամ ծառայութեան կոչուած է հերոսներու մահով անմահացած ազգային իտէալներու:

Ամէն մէկ Հ.Մ.Ը.Մ.ականի մէջ՝ անմահութեան մէկ գաղտնիքը կայ մեր փոքր ժողովուրդին, որովհետեւ ամէն մէկ անդամ կոչուած է որակ մը դառնալու, իր հայրենիքին ու ցեղին համար:

Ամէն մէկ Հ.Մ.Ը.Մ.ականի մէջ՝ տատմութիւնը կայ Հայոց ժողովուրդին, որովհետեւ Պատմութիւնը անցեալ մը չէ միայն, այլ՝ ներկայ մը, ու մանաւանդ՝ աղագայ:

ՄԻՆԱՍ ԹԷՕԼԷԼԵԱՆ

Չորս տարի առաջ եկանք՝
«մէկ հայրենիք, մէկ հայու-
թիւն» նշանախօսքով:

Այսօր եկանք՝ «հայրենի-
քին հետ, հայրենիքին հա-
մար» նշանախօսքով:

Չորս տարի ետք, դիտի
գանք «Հայրենիքին մէջ,
հայրենիքին համար» նշա-
նախօսքով:

*

* *

Հ.Մ.Ը.Մ. մեր 5րդ հարս-
տութիւնն է, իշխանութիւն է
առանց իշխանատրի, թագա-
տրութիւն է առանց թագաու-
րի, կայսրութիւն է առանց
կայսրի: Ան իշխած է աշխար-
հի հինգ ցամաքամասերուն
վրայ: Քսանհինգ հազար հաշ-
տղ իր անդամներով կայսրու-
թիւն չէ, բանակ չէ, հաղա՛
ի՞նչ է...:

ԿԱՐՕ ԹԻԻԹԻԻՆՃԵԱՆ

...՜ ճ ի ղ յ վ
լսապ '՜՛ ի ո ղ ո մ լ '՜՛ ղ ղ վ ը
-ս ս ո ն ո հ ի ս լ ղ ղ ղ ղ ո կ ղ ո մ լ ղ
ձ ո ս ի ղ ո մ ղ ո կ ղ ո կ ղ ո կ ղ ո կ
-ս ո մ ղ ո մ ղ ո կ ղ ո կ ղ ո կ ղ ո կ
ձ ո ս ի ղ ո մ ղ ո կ ղ ո կ ղ ո կ ղ ո կ
ձ ո ս ի ղ ո մ ղ ո կ ղ ո կ ղ ո կ ղ ո կ
ձ ո ս ի ղ ո մ ղ ո կ ղ ո կ ղ ո կ ղ ո կ

* *
*

:իսճնոսկուր
-ուղ «սուրպ ղ վ ճ վ ղ ղ ղ ղ ո կ
'ձ ղ ղ ղ ղ վ ճ վ ղ ղ ղ ղ ո կ» ղ ղ ո կ
վ ս վ ղ 'ձ ո կ վ մ ո ս ո ս ո կ

:իսճնոսկուր «սուր
-ու կ ղ վ ճ վ ղ ղ ղ ղ ո կ 'տ ո կ ղ վ ճ
-վ ղ ղ ղ ո կ» ղ ղ ո կ ղ վ ո ս ո կ

:իսճնոսկուր «լի ղ
-ս ո կ կ ղ ղ 'ձ վ ղ ղ ղ ո կ կ ղ ղ ո կ»
'ձ ղ ո կ ղ ղ ո ս ո կ վ մ ո ս ո ս ո կ



